

Կոտիտն էլ հնարանդուում է Պարսից: Սոսրոյ Ապրուէզը յատուկ հրովարտակով նրանց Գուռն է կանչում եւ դաւաճանութեամբ հետզհետէ սպանել տալիս. Կոտիտին սպանում են ճանապարհին, երբ նա դեսպան էր ուղարկուած «ի Մրժուին»: Նորա մահուան ճիշդ թուականը նշանակել չենք կարող, բայց Սերէնոսի պատմութեան ընթացքից դատելով, պէտք է նշանակել մօտաւորապէս 600 թուին, երբ արդէն Սմբատ Բագրատունին է սկսում դեր խաղալ իրրեւ Վրկանայ մարդպան եւ Պարսից սպարապետ: Կոտիտի հանդէս գալը, ուրեմն, պէտք է նշանակել 590-600 թ.թ.: Պատկերաքանդակի Մանուէղ Ամատունեաց տէրը պէտք է ապրէր 510-590 թուերի մէջ:

Գ՛ւրբ թղթոցի մի այլ վաւերական 552/3 թուականից՝ տալիս է շատ հաւանական հիմունքներ, որոշելու նորա ժամանակը: Ներսէս Բ.—ի միաբանական թղթին ստորագրում են մի շարք իշխաններ, ոմանք իրենց տոհմական, եւ ոմանք, տարաբաղդարար, միայն հայրանունով: Գոցանից մէկն է «Սահակ ի Մանուէղեան», որին պիտի համարել տաճարի հիմնադրի որդին: Ուրիշ հանդամանքներ աւելի եւս ճշմարտանման են դարձնում մեր կարծիքը: Պողոսիանի հիւսիսային դրան վերայ եղծուած արձանագրութեան մնացորդներից կարդացուած է «Սահակ» անունը, գրչութեան ձևից դատելով հին. «Սահկ» անունը կրկնուած է նաեւ հիւսիսային պատի արեւմտեան լուսամուտի պսակի թեւի վերայ. այս տեղը աննշան լինելով, դժուար է ենթադրել, թէ շինող իշխանի անունը կամ նորա որդու անունը լինի, հաւանորէն այդ ճարտարագետի անունն էր, ուստի եւ ոչ պակաս արժէքաւոր մեկ համար: Բայց դրան ճակատաքարի արձանագրութեան մէջ յիշուած Սահակը չէր կարող աննշան մէկը լինել. չէր կարող նաեւ եպիսկոպոսի անունը լինել, որովհետեւ ժամանակի եպիսկոպոսը Սոսրոյ էր կոչուած: Մենք շատ եւ շատ հաւանական ենք համարում, որ նա չէնց Ներսէս Բ.—ի ժողովին մասնակից «Սահակ ի Մանուէղեան»-ն է, այսինքն տաճարի շինողի որդին: Ի նկատի պէտք է ունենալ եւ այն հանդամանքը, որ երկու որսորդներից մէկը աղկընաւոր է եւ ձիով, միւսը հետեւակ եւ նիզակաւոր, երկու տարբեր անձնաւորութիւններ, հայր եւ որդի: Այս հաւանական

ենթադրութիւնների եւ տուեալների վերայ եկեղեցու շինութեան ժամանակը նշանակում ենք Զ. դարի երկրորդ քառորդին, Մանուէղ Ամատունեացը համարելով Մանուէրի որդին, իսկ Կոտիտին «Սահակ ի Մանուէղեանի» որդին: Մեր նշանակած ժամանակն էլ միանգամայն յարմար է գալիս այդ շրջանին. մի այսպիսի հոյակապ շէնք կանգնելու համար, աւելի խաղաղ ժամանակ էր հարկաւոր. մեր մատնանշած ժամանակը չէնց այդ խաղաղութեան տարիներն էին, Յուստիանոսի եւ Սոսրոյ Անուշիրվանի մէջ կուսած դաշինքով:

## Ե.

Պողոսիանի ծագման ժամանակի ինդիւրը մօտաւորապէս որոշելուց յետոյ, տեսնենք ի՞նչ արժէք է ներկայացնում այն՝ հայ արուեստի եւ ճարտարագիտութեան պատմութեան նկատմամբ: Երկու խմբի կարող ենք բաժանել մեր դիտողութիւնները, մէկը կապուած շէնքի մարմնի, յատակագծի եւ դարդարանքի հետ, միւսը գմբեթի ծագման:

Ինչպէս շէնքի ամբողջութեան, այնպէս էլ դարդաքանդակների մէջ տեսնում ենք երկու հոսանք իրար կողքի. մի կողմից երկարածից մի շէնք, ներսից բոլորակ կողակով (եր. 8), ներքին տարածականութեամբ եւ կտուրով մօտ եռանուս բաղրիքներին, միւս կողմից գմբեթաղ եւ արեւելեան պատի արտաքին մասով եւ կամարախորշերով, նման տեղական այլ տեսակ շէնքերին, ինչպէս Հոնիփսիմէն եւ Արուծը (Պատկ. 3, 4): Զարդաքանդակների մէջ եւս տեսնում ենք նոյն երկուութիւնը. մի կողմից համեմատելի կամ նոյն մեր բաղրիք շէնքերի քանդակներին, որոնց ծագումը Միջագետքի եւ Ասորիքի մէջ ենք տեսնում, ինչպէս արմաւենի ծառով եւ առիւծով դաշտանկարը, հարթաքանդակ պատկերաբարութիւնը հարաւային պատի լուսամուտի գլխին, արեւմտեան լուսամուտի շուշանածաղիկը, հիւսիսային դրան աւանդի յայտարարութեւ, նոյն պատի արեւմտեան զոյգ լուսամուտների պսակների թաշտանների շարքը պայտածեւերի մէջ՝ ճակատին հաւասարակող խաչով, որ Բարուլայի եւ մեր հին աւետարանների կամարներն են յիշեցնում, ուրեմն եւ երկու արուեստների աղերսը: Սորա վերայ պիտի աւելացնենք հա-